ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<20>> ՀՈՒԼԻՍ 2018 թվականի N 27

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու նիստի օրակարգը.

1. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

   /Հարցը ներկայացնում է՝ ֆինտնտ և գանձումների բաժնի պետ Լ. Հովհաննիսյանը/

2. ՀԱՂՈՐԴՈՒՄ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

   /Հարցը ներկայացնում է՝ ֆինտնտ և գանձումների բաժնի պետ Լ. Հովհաննիսյանը/

3. ՔԱՂԱՔԱՅԻ ՇՈՂԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ՝ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

   /Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի գլխավոր մասնագետ Հ. Դավթյանը/

4. ՔԱՂԱՔԱՅԻ ՎԱՉԱԳԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ՝ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

   /Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի գլխավոր մասնագետ Հ. Դավթյանը/

5. ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

   /Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի գլխավոր մասնագետ Հ. Դավթյանը/

6. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ 12 ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ԹԻՎ 56 ՄԵՆՅԱԿԸ ԼՈՐԵՏԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԱՄՐԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

   /Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի քարտուղար Կ. Մելքոնյան/

7. «ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԲՀ-Ի ՀԱՎԱՔԱՐԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի քարտուղար Կ. Մելքոնյան/

8. «ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի քարտուղար Կ. Մելքոնյան/

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ
2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ
3. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
4. ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ
5. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
6. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
7. ՄԱՅԻՍ ՄԵՀՐԱԲՅԱՆ
8. ՄԱՅԻՍ ՆԱԴԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<20>> ՀՈՒԼԻՍ 2018 թվականի N 28-Ն

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ. ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2019թ. բնապահպանական ծրագրով պետական բյուջեից կապիտալ ծախսումների համար պլանավորվելիք 3177,7 հազ. դրամը ոռոգման ցանցի 3-րդ էտապի աշխատանքների կազմակերպման, նախագծանախահաշվային փաստաթղթերի նախնական կազմման և փորձաքննության անցկացման համար 2018թ. համայնքի բյուջեի սեփական միջոցների հաշվից 90,0 հազ. դրամ տրամադրելու, Արարատ քաղաքի Աղբյուր Սերոբի 20, Շահումյան 61, Արարատյան Զանգված 5 շենքերի աստիճանների կապիտալ վերանորոգման, Արարատ քաղաքի մի քանի օբյեկտների համայնքային սեփականության պետական գրանցման համար լրացուցիչ ֆինանսավորում տալու, ինչպես նաև Արարատի ՔԿԱԳ բաժնի հոդվածներում փոփոխություն կատարելու նպատակով, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5րդ, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի 2018թ. բյուջեում կատարվող հետևյալ փոփոխությունները.

1) Պակասեցնել՝

ա) 0451.51 «Ճանապարհային տրանսպորտ» ծրագրի 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածը 910,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 71369,454.3 հազ. դրամ, իսկ ծրագրի ծախսային պլանը սահմանել՝ 73639,454.3 հազ. դրամ,

բ) 11.12.51 « Պահուստային ֆոնդեր» ծրագրի 4891 «Պահուստային ֆոնդեր» հոդվածը 403,0 հազ. դրամ:

Սահմանել համայնքի 2018թ. բյուջեի պահուստային ֆոնդը 142,5 հազ. դրամ:

գ) 0131.51 «Քաղաքացիական կացության ակտերի գրանցում» ծրագրի 4214 «Կապի ծառայություններ» հոդվածը 150,0 հազ. դրամ: Սահմանել վերջինիս ծախսային պլանը 100,0 հազ. դրամ:

2) Ավելացնել՝

ա) 0424.51 «Ոռոգման ցանցի կառուցում» ծրագրի 5134 «Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում» հոդվածը 90,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս և ծրագրի ծախսային պլանը 270,0 հազ. դրամ,

բ) 0661.54 «Բազմաբնակարան շենքերի բարեկարգում» ծրագրի

1) 5113 «Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածը 800,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսայինք պլանը 2100,0 հազ. դրամ,

2) Նույն ծրագրի՝ 5134 «Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում» հոդվածը 20,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 50,0 հազ. դրամ, իսկ ծրագրի ծախսային պլանը՝ 2150,0 հազ. դրամ,

գ) 0161.52 «Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում» ծրագրի 4823 «Պարտադիր վճարներ» հոդվածը 403,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 703,0 հազ. դրամ: Սահմանել ծրագրի ծախսային պլանը 853,0 հազ. դրամ:

3) Ավելացնել՝

0131.51 «Քաղաքացիական կացության ակտերի գրանցում» ծրագրի

ա) 4252 «Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածը 75,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 100,0 հազ. դրամ.

բ) 4261 «Գրենական պիտույքներ» հոդվածը 75,0 հազ. դրամ, սահմանելով վերջինիս ծախսային պլանը 95,0 հազ. դրամ:

4) Համայնքի ղեկավարին՝ կազմել նոր նախահաշիվներ և ժամանակացույցեր:

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ _____
2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ _____
3. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____
4. ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____
5. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____
6. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____
7. ՄԱՅԻՍ ՄԵՀՐԱԲՅԱՆ _____
8. ՄԱՅԻՍ ՆԱԴԱՐՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<20>> ՀՈՒԼԻՍ 2018 թվականի N 29-Ն

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2018Թ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Արարատի քաղաքային համայնքի 2018թ. բյուջեի առաջին կիսամյակի եկամուտների պլանը կազմել է 265920,1 հազ. դրամ, որը կատարվել է 280342,7 հազ. դրամով կամ 105,4 %-ով:

Այն ըստ հարկատեսակների ունի հետևյալ տեսքը՝

հազ. դրամ

	Առաջին կիսամյակ		
	Պլան	Փաստացի	Կատ. %
1	2	3	4
1.Գույքահարկ ն/թ	13500,0	19134,5	141,7
իրավաբանական	4500,0	4700,7	104,5
ֆիզիկական	9000,0	14433,8	160,4
2.Հողի հարկ ն/թ	1300,0	1358,7	104,5
իրավաբանական	700,0	760,4	108,6
ֆիզիկական	600,0	598,3	99,7
3.Պետ տուրքեր ն/թ	2800,0	3233,4	115,5
նոտար	2050,0	2697,4	131,6
ՔԿԱԳ	750,0	536,0	71,5
4.Վարձակալություն ն/թ.	2300,0	2768,8	120,4
գույքի վարձ	300,0	372,2	124,0
հողի վարձ	2000,0	2396,6	119,8
5.Տեղական տուրք ն/թ.	4950,0	5021,2	101,4
քանդելու թույլտվություն	7,5	5,0	66,7
վերակառուցելու թույլտվություն	7,5	--	--
շինարարության թույլտվություն	50,0	30,0	60,0
ոգելից խմիչք և ծխախոտի թույլտվ.	1000,0	1149,5	114,9

Վառելիքաքսայուղերի վաճառքի թույլտվություն	240,0	210,0	87,5
տեխնիկական հեղուկների մանրածախ վաճառքի թույլտվություն	60,0	60,0	100,0
բացօթյա վաճառք	110,0	146,2	132,9
արտաքին գովազդ	1800,0	1927,0	107,0
տաքսի ծառայություն	30,0	20,0	66,7
թանկարժեք մետաղներ	200,0	200,0	100,0
հանրային սնունդ	81,0	81,0	100,0
Շահումով խաղերի և վիճակախաղերի ժամը 24:00-ից հետո թույլտվություն	300,0	200,0	66,7
Արխիվային փաստաթղթերի տրամադրում	1064,0	992,5	93,3
6.Վարչական գանձումներ	21000,0	26761,4	127,4
7.Դոտացիա	191038,8	191038,8	100,0
8.Սուբվենցիա /երաժշտական/	1867,0	1557,1	83,4
9.Պատվիրակված ծառայություններ ն/թ	7994,3	7729,7	96,7
ՔԿԱԳ	2673,3	2409,3	90,1
ՍՕՏԲ	5321,0	5320,4	100,0
10.Տեղական վճար ն/թ **ծնողական վճար** **օրենքով սահմանված**	14100,0 14000,0 100,0	13730,5 13501,5 229,0	97,4 96,4 229,0
11. Սուբվենցիա բնապահպանական	2070,0	1990,0	96,1
12.Մուտքեր օտարումից	3000,0	6018,6	200,6
Ընդամենը	**265920,1**	**280342,7**	**105,4**

2018թ. համայնքային բյուջեի առաջին կիսամյակի ծախսային պլանը կազմում է 356527,2 հազ. դրամ. այն կատարվել է 237715,1 հազ. դրամով կամ 66,7 %:

Ըստ ծրագրի բյուջեի ծախսային մասի կատարման արդյունքներն են.

հ/հ	Ծրագիրը	Հոդվածը	Անվանական ծախսերը	Պլանը	Փաստացի	Կատարման %
1	0111.51	---	Կառավարման մարմնի պահպանում ն/թ	54702,0	39697,4	72,6
		4111	Աշխատավարձ	40000,0	32274,4	80,7
		4212	Էներգետիկ ծառայություններ	1800,0	982,3	54,6
		4213	Կոմունալ ծառայություններ	600,0	81,8	13,6
		4214	Կապի ծառայություններ	1452,0	612,8	42,2
		4215	Ապահովագրական ծախսեր	100,0	43,0	43,0

		4221	Ներքին գործուղումներ	200,0	56,0	28,0
		4232	Համակարգչային ծառայություններ	400,0	236,0	59,0
		4234	Տեղեկատվական ծառայություններ	600,0	544,8	90,8
		4239	Ընդ. Բնույթի այլ ծառայություններ	2000,0	412	20,6
		4241	Մասնագիտական ծառայություններ	450,0	54,15	12,0
		4252	Մեք. և սարք. ընդհ. նորոգ. և պահպ.	2000,0	871,0	43,5
		4261	Գրենական պիտույքներ	800,0	440,5	55,7
		4264	Տրանսպորտային նյութեր	2500,0	1828,3	73,1
		4267	Կենցաղային նյութեր	400,0	71,46	17,8
		4823	Պարտադիր վճարներ	400,0	259,3	64,8
		5122	Վարչական սարքավորումներ	1000,0	925,0	92,5
2	0131.51	---	ՔԿԱԳ ծառայության կազմակերպում ն/թ	3060,0	1912,4	62,5
		4111	Աշխատավարձ	3000,0	1908,4	63,6
		4221	Ներքին գործուղումներ	60,0	4,0	6,7
3	0161.52	--	Գույքի նկատմ .իրավուն. գրանցում ն/թ	450,0	354,0	78,7
		4822	Այլ հարկեր	50,0	16,0	32,0
		4823	Պարտադիր վճարներ	300,0	278,0	92,7
		4241	Մասնագիտական ծառայություններ	100,0	60,0	60,0
4	0451.59	--	Փողոցների պահպանում և շահագործում ն/թ	538,2	511,0	94,4
		5113	Շենք-շինությունների կառուցում	518,2	491,0	94,7
		5134	Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում	20,0	20,0	100,0
5	0641.56	--	Փողոցների լուսավորում ն/թ	10600,0	6071,5	57,3
		4212	Էներգետիկ ծառայություններ	8000,0	4327,2	54,1
		4251	Շենք. և կառ. ընդ. նորոգ. և պահպան.	500,0	254,3	50,8
		5112	Շենք-շինությունների կառուցում	1000,0	1000,0	100,0
		5134	Նախագծա-նախահ. փաստ. կազմում	100,0	40,0	40,0
		4239	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	1000,0	450,0	45,0
6	0661.51	---	Բնակ. շին. և կոմունալ ծառայություն ն/թ	91404,0	55212,4	60,4
		4111	Աշխատավարձ	42000,0	40479,2	96,4
		4212	Էներգետիկ ծառայություններ	2500,0	1276,0	51,0
		4213	Կոմունալ ծառայություններ	604,0	330,0	54,6
		4214	Կապի ծառայություն	70,0	65,0	92,8
		4215	Ապահովագրական ծառայություն	24,5	22,9	93,5
		4239	Ընդհ. բնույթի այլ ծառայություններ	600,0	450,0	75,0
		4251	Շենք. և կառ. ընդ. նորոգ. և պահպան	5350,0	3873,7	72,4

		4252	Մեք. և սարքավ. ընդհ. նորոգ. և պահ.	2500,0	1353,5	54,1
		4261	Գրենական պիտույք և հագուստ	600,0	284,0	47,3
		4262	Գյուղատնտեսական ապրանքներ	200,0	200,0	100
		4264	Տրանսպորտային նյութեր	5800,0	4535,0	78,2
		4267	Կենցաղային նյութեր	600,0	385,0	64,2
		4639	Այլ ընթացիկ դրամաշնորհներ	1560,0	840,0	53,8
		4822	Այլ հարկեր	1000,0	500,0	50,0
		4823	Պարտադիր վճարներ	120,0	112,0	93,3
		5129	Այլ մեքենաներ և սարքավորումներ	300,0	300,0	100,0
7	0811.51	--	Սպորտային միջոցառումների կազմակերպում ն/թ	200,0	156,0	78,0
		4239	Ընդհանուր բնույթի ծառայություններ	100,0	100,0	100,0
		4269	Հատուկ նպատակային նյութեր	100,0	56,0	56,0
8	0823.51	--	Մշակութային տներ, ակումբներ ն/թ	20000,0	15146,0	75,7
		4639	Այլ ընթացիկ դրամաշնորհներ	20000,0	15146,0	75,7
9	0851.55	--	Հանգիստ, մշակույթ և կրոն ն/թ	3823,0	3063,0	80,1
		4239	Ընդհան.բնույթի այլ ծառայություններ	3100,0	2340,0	75,5
		4729	Այլ նպաստներ բյուջեից	300,0	300,0	100,0
		5129	Այլ մեքենաներ և սարքավորումներ	423,0	423,0	100,0
10	0911.51	--	Նախադպրոցական կրթություն ն/թ	80000,0	56186,0	70,2
		4639	Այլ ընթացիկ դրամաշնորհներ	80000,0	56186,0	70,2
11	0932.55	--	Կարիքավ. երեխան. մ/մ ուսմ. վարձ	500,0	265,0	53,0
		4729	Այլ նպաստներ բյուջեից	500,0	265,0	53,0
12	0941.55	--	Կարիքավ. երեխան. բ/կ ուսմ. Վարձ ն/թ	1000,0	1000,0	100,0
		4729	Այլ նպաստներ բյուջեից	1000,0	1000,0	100,0
13	0951.51	--	Արտադպրոցական դաստիարակութ. ն/թ	75000,0	47102,0	62,8
		4639	Այլ ընթացիկ դրամաշնորհներ	75000,0	47102,0	62,8
14	0961.52	--	Կրթությանը տրամադր. օժ.ծառայութ. ն/թ	3000,0	1455,0	48,5
		4239	Ընդհ. բնույթի այլ ծախսեր	3000.0	1455,0	48,5
15	1071.54	--	Սոց. անապ. անձանց աջակցություն ն/թ	3500,0	2800,0	80,0
		4726	Հուղարկ. նպաստ բյուջ.	1000,0	550,0	55,0
		4729	Այլ նպաստներ բյուջեից	2500,0	2250,0	90,0
16	1091.51	--	Սոցիալական աջակց. /ՍԱԱՏԲ/ ն/թ	6470,0	4921,4	76,1
		4111	Աշխատավարձ	6000,0	4665,0	77,7
		4214	Կապի ծառայություններ	80,0	42,4	53,0
		4221	Ներքին գործուղումներ	160,0	104,0	65,0

		4261	Գրենական պիտույքներ	150,0	50,0	33,3
		4267	Կենցաղային նյութեր	80,0	60,0	75,0
17	0211.51	--	Ռազմական պաշտպանություն ն/թ	200,0	75,0	37,5
		4729	Այլ նպաստներ բյուջեից	200,0	75,0	37,5
18	0321.55	--	Փրկարար ծառայություններ ն/թ	750,0	750,0	100,0
		4269	Հատուկ նպատակային նյութեր	750,0	750,0	100,0
19	0661.54	--	Բազմաբնակարան շենքերի բարեկարգում ն/թ	1330,0	1027,0	77,2
		5113	Շենքերի և շինությունների բարեկարգում	1300,0	997,0	76,7
		5134		30,0	30,0	100,0
ԸՆԴԱՄԵՆԸ				356527,2	237755,1	66,7

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ընդունել ի գիտություն Արարատի քաղաքային համայնքի 2018թ. բյուջեի առաջին կիսամյակի կատարման վերաբերյալ հաղորդումը:

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ
2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ
3. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
4. ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ
5. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
6. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
7. ՄԱՅԻՍ ՄԵՀՐԱԲՅԱՆ
8. ՄԱՅԻՍ ՆԱԴԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<20>> ՀՈՒԼԻՍ 2018 թվականի N 30

ՔԱՂԱՔԱՑԻ ՇՈՂԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ՝ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Շողիկ Մուրադյանը Ք. Արարատ, Խանջյան փողոց 54/4 շինություն հասցեում / ծածկագիր 03-002-0011-0025/ ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող 0,00453 հա մակերեսով հողատարածք և վրան կառուցված առևտրի սրահ: Նշված տարածքին կից առկա է ազատ տարածք, որը չի օգտագործվում այլ անձանց կողմից: Քաղաքացի Շողիկ Մուրադյանը դիմել է համայնքապետարան՝ նշված տարածքը սեփականության իրավունքով, առևտրի սրահի ընդլայնման նպատակով, հողատարածքի կադաստրային արժեքով իրեն օտարելու խնդրանքով:
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 08.05.2003թ. թիվ 714-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետ, 43-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի պահանջներով, և նկատի ունենալով, որ Խանջյան փողոց 54/4 շինություն հասցեում գտնվող, 03-002-0011-0025 ծածկագիրը կրող , քաղաքացի Շողիկ Մուրադյանին առևտրի սրահի կառուցման նպատակով հատկացված տարածքին կից 0,00279 հա ազատ տարածքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Բավարարել Շողիկ Մուրադյանի խնդրանքը և ք. Արարատ, Խանջյան փողոց 54/4 շինություն հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող առևտրի սրահին և զբաղեցրած 0,00453 հա մակերեսով հողատարածքին հարակից 0,00279 հա մակերեսով ազատ հողատարածքը՝ ընդլայնման նպատակով, սեփականության իրավունքով, հողի կադաստրային արժեքի 100% չափով , ուղղակի վաճառքի կարգով օտարել նրան՝ Շողիկ Մուրադյանին:
2. Պարտավորեցնել քաղաքացուն՝ տարածքում շինարարական աշխատանքները կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և քաղաքաշինական գործող նորմերով:

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ _____
2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ _____
3. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____
4. ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____
5. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____
6. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____
7. ՄԱՅԻՍ ՄԵՀՐԱԲՅԱՆ _____
8. ՄԱՅԻՍ ՆԱԴԱՐՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<20>> ՀՈՒԼԻՍ 2018 թվականի N 31

ՔԱՂԱՔԱՑԻ ՎԱՉԱԳԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ՝ ԱՌԵՎՏՐԻ ՍՐԱՀԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏԱՐԱԾՔ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Վաչագան Հակոբյանը ք. Արարատ, ՈԿՖ բանավան 10/3-2 շինություն հասցեում / ծածկագիր 03-002-0065-0004/ ունի սեփականության իրավունքով իրեն պատկանող 0,002408 հա մակերեսով հողատարածք և վրան կառուցված առևտրի սրահ: Նշված տարածքին կից առկա է ազատ տարածք, որը չի օգտագործվում այլ անձանց կողմից: Քաղաքացի Վաչագան Հակոբյանը դիմել է համայնքապետարան՝ նշված տարածքը սեփականության իրավունքով, առևտրի սրահի ընդլայնման նպատակով, հողատարածքի կադաստրային արժեքով իրեն օտարելու խնդրանքով:
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 08.05.2003թ. թիվ 714-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 66-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի, 43-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ ենթակետի պահանջներով, և նկատի ունենալով, որ ՈԿՖ բանավան 10/3-2 շինություն հասցեում գտնվող, 03-002-0065-0004 ծածկագիրը կրող, քաղաքացի Վաչագան Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող առևտրի սրահին հարակից ազատ տարածքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտում, հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Բավարարել Վաչագան Հակոբյանի խնդրանքը և ք. Արարատ, ՈԿՖ բանավան 10/3-2 շինություն հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող առևտրի սրահին և զբաղեցրած 0,002408 հա մակերեսով հողատարածքին հարակից 0,0024 հա մակերեսով ազատ հողատարածքը՝ ընդլայնման նպատակով, սեփականության իրավունքով, հողի կադաստրային արժեքի 100% չափով , ուղղակի վաճառքի կարգով օտարել նրան՝ Վաչագան Հակոբյանին:
2. Պարտավորեցնել քաղաքացուն՝ տարածքում շինարարական աշխատանքները կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և քաղաքաշինական գործող նորմերով:

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ _____
2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ _____
3. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____
4. ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____
5. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____
6. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____
7. ՄԱՅԻՍ ՄԵՀՐԱԲՅԱՆ _____
8. ՄԱՅԻՍ ՆԱԴԱՐՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<20>> ՀՈՒԼԻՍ 2018 թվականի N 32

ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ, 56-րդ հոդվածի 5-րդ կետերով և հիմք ընդունելով քաղաքացի Արմեն Հովհաննիսյանի դիմումը՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի զբաղեցրած 0,0026 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը իրեն օտարելու մասին

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սեփականության իրավունքով քաղաքացի Արմեն Հովհաննիսյանին պատկանող ավտոտնակի զբաղեցրած 0,0026 հա մակերեսով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքի կարգով օտարել նրան:
2. Հողամասի օտարման գին սահմանել կադաստրային արժեքի 100%-ի չափով, որը կազմում է 1մ^2 = 1242 դրամ:

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ _____
2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ _____
3. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____
4. ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____
5. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____
6. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____
7. ՄԱՅԻՍ ՄԵՀՐԱԲՅԱՆ _____

8. ՄԱՅԻՍ ՆԱԴԱՐՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

<<20>> ՀՈՒԼԻՍ 2018 թվականի N 33

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ 12 ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆԻ ԹԻՎ 56 ՍԵՆՅԱԿԸ ԼՈՐԵՏԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԱՄՐԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Լորետա Գրիգորյանը 1998թ-ից ամուսնացել և մինչև 2007թ. համատեղ ամուսնական կյանքով ապրել է քաղաքացի Գագիկ Բաղալյանի հետ Աբովյան փողոց 12 հանրակացարանի թիվ 56 և 57 սենյակներում: Թիվ 56 սենյակը ամրագրված է եղել ամուսնուն՝ Գագիկ Բաղալյանին, իսկ 57 սենյակը իրեն՝ Լորետա Գրիգորյանին: Համատեղ կյանքում նրանք ունեցել են երկու երեխա՝ Սոֆյա Գագիկի Բաղալյանը /ծնված 12.04.1999թ./ և Հակոբ Գագիկի Բաղալյանը /ծնված 18.12.2001թ./: 2011թ. գրանցվել է նրանց ամուսնալուծությունը և քաղաքացի Գագիկ Բաղալյանը հեռացել է ընտանիքից՝ նրանց տիրապետմանը թողելով նաև իրեն ամրագրված թիվ 56 սենյակը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ, 35-րդ հոդվածի 1-ին կետի 18-րդ ենթակետի պահանջներով, և հաշվի առնելով, որ քաղաքացի Գագիկ Բաղալյանը հրաժարվել է վերոնշյալ սենյակից և դուրս է գրանցվել այդ սենյակի հաշվառումից, իսկ սենյակը մինչ օրս տիրապետում են քաղաքացի Լորետա Գրիգորյանը և նրա երկու երեխաները.

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Արարատ քաղաքի Աբովյան փողոց 12 հանրակացարանի թիվ 56 սենյակը ամրագրել նշված սենյակում բնակվող Լորետա Գրիգորյանի ընտանիքին բաղկացած երեք անձից՝ ինքը, դուստրը՝ Սոֆյա Գագիկի Բաղալյանը և որդին՝ Հակոբ Գագիկի Բաղալյանը:
2. Պարտավորեցնել Լորետա Գրիգորյանին համապատասխան պայմանագրեր կնքել սպասարկող կազմակերպությունների հետ:

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ _____
2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ _____
3. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____
4. ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____

5. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

6. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____

7. ՄԱՅԻՍ ՄԵՀՐԱԲՅԱՆ _____

8. ՄԱՅԻՍ ՆԱԴԱՐՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<20>> ՀՈՒԼԻՍ 2018 թվականի N 34

«ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ԲՀ-Ի ՀԱՎԱՔԱՐԱՐՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքում ամրագրված է սանիտարական մաքրման սխեման, որի հիմնական տարրերից է հանդիսանում սանիտարական մաքրման ենթակա տարածքները:
«Արարատ քաղաքային կոմունալ ծառայություն» ԲՀ –ի հավաքարարների աշխատանքը կանոնակարգելու համար անհրաժեշտ է , որպեսզի հստակ սահմանվի մեկ հավաքարարին բաժին ընկնող մաքրվող տարածքը:
Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 20-րդ ենթակետով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով և հիմք ընդունելով «Արարատ քաղաքային կոմունալ ծառայություն » ԲՀ –ի տնօրենի առաջարկությունը

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Մեկ դրույքով աշխատող յուրաքանչյուր հավաքարարին հատկացնել 4500 մ^2 մաքրման ենթակա տարածք:

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ _____
2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ _____
3. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____
4. ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____
5. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____
6. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____

7. ՄԱՅԻՍ ՄԵՀՐԱԲՅԱՆ _____

8. ՄԱՅԻՍ ՆԱԴԱՐՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
<<20>> ՀՈՒԼԻՍ 2018 թվականի N 35

«ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀՈԱԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի Խանջյան 57 հասցեում գտնվող «Արարատի ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի զբաղեցրած շենք-շինություններից թիվ 3 մասնաշենքը մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի շենք ծառայեցնելու նպատակով, Արարատ համայնքին հանձնելու հարցը քննարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությունում և քննարկման արդյունքում նպատակահարման է գտնվել նշված գույքն անհատույց օգտագործման իրավունքով հանձնել համայնքին:
Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 17-ի N 304-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն, պետական սեփականություն հանդիսացող ամշարժ գույքը համայնքներին անհատույց օգտագործման իրավունքով կարող է տրամադրվել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե առկա է համայնքի ավագանու հավանությանն արժանացած և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված՝ տվյալ մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրին համապատասխանող ծրագիրը:
Ելնելով վերոգրյալից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10րդ կետով

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է

Հավանություն տալ «Արարատ քաղաքի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն» ՀՈԱԿ-ի գործունեության քառամյա ծրագրին :

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ
2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ
3. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
4. ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ

5. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

6. ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ _____

7. ՄԱՅԻՍ ՄԵՀՐԱԲՅԱՆ _____

8. ՄԱՅԻՍ ՆԱԴԱՐՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

Հաստատված է Արարատ քաղաքային համայնքի
ավագանու 20.07.2018թ. հերթական նիստի թիվ 35 որոշումով

Ծ Ր Ա Գ Ի Ր

„ Արարատ քաղաքի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն„
համայնքային ոչ առևտրային կազմակերպության գործունեության 4 – ամյա

ԱՐԱՐԱՏ 2018

I. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

,,Արարատ քաղաքի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն,, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ քաղաքային համայնքի ավագանու ,,11,, ,,մարտի,, 2014թ. թիվ 14-Ն որոշմամբ:

Կազմակերպության պետական գրանցման վկայականի համարն է՝ 03 Ա 955959

1.1 Կազմակերպության նպատակներն ու խնդիրները

,,Արարատ քաղաքի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն,, ՀՈԱԿ-ի նպատակներն են /ըստ կազմակերպության կանոնադրության/.

ա/ արտադպրոցական ուսուցումն ու դաստիարակությունը, սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների և լրացուցիչ գիտելիքների պահանջների բավարարումը

բ/ ժողովրդական, ժամանակակից արվեստների և արհեստների ուսուցումը, հոգևոր, ստեղծագործական ունակությունների գեղագիտական ու ֆիզիկական զարգացումը

գ/ ռազմահայրենասիրական դաստիարակությունը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձևավորումը:

,,Արարատ քաղաքի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն,, ՀՈԱԿ-ի խնդիրներն են /ըստ կազմակերպության կանոնադրության/.

ա/ դպրոցականների նախասիրությունների, ունակությունների զարգացումը, առողջության պահպանումն ու ամրապնդումը, վարքի շեղումների կանխարգելումը

բ/ երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացումը, հոգևոր, գեղագիտական, բնապահպանական և ֆիզիկական դաստիարակության ապահովումը՝ հաշվի առնելով նրանց պահանջմունքները, հետաքրքրությունները, հակումներն ու ընդունակությունները

գ/ մասնագիտական կողմնորոշման համար նպաստավոր պայմանների ստեղծումը, դպրոցում ստացած գիտելիքների ամրապնդումն ու խորացումը, տեսական գիտելիքների և գործնական ունակությունների փոխադարձ կապի ամրապնդումը

դ/ համակողմանիորեն և ներդաշնակ զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումը:

1.2 Կազմակերպության գործունեության իրավական հիմքերը

,,Արարատ քաղաքի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն,, ՀՈԱԿ-ը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, կազմակերպության կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

,,Արարատ քաղաքի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն,, ՀՈԱԿ-ի աշխատողների միջև հարաբերությունները կարգավորվում են, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.3 Կազմակերպության առկա մարդկային ռեսուրսներն

1. Արաքս Դավթյան Բորիսի /տնօրեն/
2. Ելենա Տոնոյան Անուշավանի /փոխտնօրեն/
3. Լիպարիտ Տիխով Վոլոդյայի / կազմակերպիչ/
4. Վարուժան Կարապետյան Վարդանի /հաշվապահ/
5. Սոնյա Խաչատրյան Սուքիասի / կադրերի տեսուչ, գործավար/
6. Հասմիկ Գրիգորյան Ավետիքի / խմբավար/
7. Թամարա Հարությունյան Իվանի / խմբավար/
8. Լուարա Ղարիբյան Ռազմիկի / խմբավար/
9. Քրիստինա Բալայան Կարենի / խմբավար/
10. Շուշանիկ Ավետիսյան Ստյոպայի / խմբավար/
11. Անահիտ Աբրահամյան Արմենակի / խմբավար/
12. Տաթևիկ Գևորգյան Ակուդարի / խմբավար/
13. Հասմիկ Դաղայան Արամայիսի / խմբավար/
14. Լուսինե Վարդանյան Հովհաննեսի / խմբավար/
15. Արմինե Դեմիրչյան Հակոբի / խմբավար/
16. Գայանե Սաղաթելյան Գուրգենի / խմբավար/
17. Աննա Անտոնյան Արմենի / խմբավար/
18. Օսաննա Նշանյան Հովհաննեսի / խմբավար/
19. Հասմիկ Մուրադյան Հայկի / խմբավար/
20. Տաթևիկ Բաղդասարյան Արարատի / խմբավար/
21. Օֆիկ Մուրադյան Արմենի / խմբավար/
22. Զվարթ Բաբայան Աբգարի / հավաքարար/

1.4 Կազմակերպության գործունեության ոլորտը

,,Արարատ քաղաքի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն,, ՀՈԱԿ-ի գործունեության ոլորտն է՝ արտադպրոցական ուսուցում և դաստիարակություն:

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

2.1 Ծրագրի նպատակը

Սույն ծրագրի համար հիմք է հանդիսացել՝

ա/ Արարատ քաղաքային համայնքի և շրջակա համայնքների մանուկների ու պատանիների համար անվճար ուսուցման կազմակերպումը.

բ/ ժողովրդական, ժամանակակից, կիրառական արվեստի և արհեստների զարգացումը:

2.2 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական աղբյուրները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 4 տարիների համար կազմակերպության գործունեության կազմակերպման ֆինանսական աղբյուր է հանդիսանում Արարատի համայնքապետարանը:

2.3 Ծրագրի իրականացման ժամկետները

Սույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել 4 տարվա ընթացքում:

2.4 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները

Սույն ծրագրի շրջանակներում առաջիկա 4 տարիներին նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1-ին տարվա ընթացքում – տանիքի վերանորոգում

2-րդ տարվա ընթացքում- դռների, պատուհանների փոխում, արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում

3-րդ տարվա ընթացքում- նոր գույքի և սարքավորումների ձեռքբերում

4-րդ տարվա ընթացքում- խմբակների քանակի ավելացում

2.5 Ծրագրի իրականացման համար ակնկալվող արդյունքը

Սույն ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվում է, որ ,,Արարատ քաղաքի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն,, ՀՈԱԿ-ը կապահովի՝

ա/ նոր աշխատատեղերի ստեղծում

բ/ մանուկների և պատանիների զբաղվածության խնդրի լուծում: